տովանում էր, թէ Լալա փաշան նրանց պա-
պերին բռնի իսլամացրել է, այլ ասում էին
մոլլաներին եւ Օսմանեան վարչական փա-
շաներին, ակամայ դնում էին մզկիթ, ուր
նրանց բռնութեամբ տանում էին, ծոմը
չէին պահում, լացում չէին կատարում,
կրկնամուսնութիւնից խուսափում էին եւ
հառաչանքով սպասում նոր յայտնութեան,
յոյս ունէին ազատուել չէրքեթի ճիրան-
ներից: Առանին կեանքը զրեթէ հին հայ-
կականն էր, սովորութիւնները, հագուստը
անփոփոխ, նամէհրամ չունէին իրար մէջ,
ծածկում էին միայն մոլլաների եւ պաշ-
տօնեաների ներկայութեանը. հալածանքի
չմատնելու համար: Այս գաւառների բնիկ-
ներից եւ ո՛չ մի մոլլա կամ ոստիկան-պաշ-
տօնեայ չկային. ուրիշ գաւառներից էին
գալիս սրանց կառավարելու: Ամէն մի ըն-
տանիքի մականունը առհմական-ժառանգա-
կան էր, — Մուխսոնց Օսմանը, Տէրտէրանց
Ալին, Քաւորանց Հուսէինը, Սանահորանց
Մահմէտը, Փահլեւանենց Դուրսունը եւ
ուրիշները: Ատում էին մանաւանդ տոհ-
մական իշխանաւորներին, որոնք պետական
պաշտօններ ստանձնած՝ կեղեքում էին
հողագործներին: 1879 թ. միեւնոյն բանը
մեզ պատմեց Տէր-Անտոնը Կոլայի Հոգամ
գիւղում. ուր բնիկները խոստովանեցին
ճշմարտութիւնը, երբ Կ.Պոլսից տուն էի
վերադառնում: